

1894

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՅՈՒԽԱՄՐԱՆ

ՀԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՀԱԿԱՏՔ ՀԱՅՈՑ



ր և է ազգի քաղաքական և բարոյական կեանքը (որ սովորաբար Պատումաթիւն կ'ըսուի՝ լաւ ճանչնալու համար, անհրաժեշտ հարկաւոր է՝ իր կրօնական իմացմունքը և գործը, պարզապէս ըստելով՝ իր հաւատոքն ալ ճանչնալ, մասնաւանդ այն ազգաց՝ որ յիշուած են ի հնագյուղ ժամանակս, և կամ ժամանակի հետ՝ անցեր են, կամ գերա կան և մնան. Այս եւցիններէս ըլլալն Հայոց՝ ոչ ոք կ'անդիսանայ. ինչպէս այսօր՝ և նոր և միջին դարուց մէջ՝ ներկայ ճանշցուած են Հայք, նոյն և հին դարուց և դիպաց մէջ:

Այեն ազգաց, կամ զրեթէ, բաց յԵրրայեցոց, ծագումն և առաջին կեանքն՝ կամ մթապատ կամ միգապատ են. մեր խնդիրն այս մութն և մէզը փարասել չե. Հայ ազգին ծագումն և աճումն հետազատել չե, այլ անոր կրօնքը. որ աւելի դիւրս կօւ ճանշցուի՝ քան քաղաքական կեանքն, ինչպէս և այլ ազգաց. և երբեմն, կրօնամք ըսել, թէ քաղաքական կեանքն բոլորովին անծանօթ ըլլայ, բայց կրօնական յիշատակը մնացած կ'ըլլան. և ինչտան այսօրեր՝ հին քանդակը, զրօշեալք, որպիսի և է ձեռապրծք, կու յայտնեն՝ պատմութեան

մէջ անծանօթ կամ սակաւածանօթ ժողովրդոց էտթիւնը, և իրենց գործերէն աւելի՝ կրօնքնին, և երբեմն զայս միայն:

Հայոց նման հին և նոր և միշտ պատմական ազգի՝ հին կրօնքն ալ քննել զիտնալ՝ նոր բան չե. շատ անզամ և շատերէ գործած և հրատարակուած է, աւելի կամ պակաս հմտութեամբ. որոց վերայ դառնալ ոչ շատ հարկ էր մեզի և ոչ ափորթելի, որովհետեւ ընդհանրապէս մուլար, սուս և անջնորդք բաներու պատկերը և զիտութիւնը են. սակայն և այնպէս՝ կրօնան նոր լցու ինչ ծագել ի մթութենէ. միտք՝ ոչ երբեք հաւանի չուզել զիտնալ՝ ինչ որ կարենայ զիտնալ իր նախնեաց և հին հարց զիտացածէն: Բայց զմեզ աւելի յորդորողն նոր կամ նորէն յիշելու և յիշեցընելու մեր նախնեաց կրօնքը, նոր ծանօթութիւններն են, զոր զիտունք՝ և զիտնոց կ'ընծայեն մեր օրերուս՝ նորանոր յայտնուած հին յիշատակարանք, բեւեռազիքք, արձանապիքք, ցանզակը, և զերեզմանաց և ի փլասակաց զուրս եւած պէսպէս անօթք, զէնք, զիցարանական պատկերը՝ քարեղէնք հողեղէնք և մետաղեայք, մեծ ու փոքր զարդեղէնք, զործիք, զէնք, և այլն, և այլն:

թերեւ կարծէ ընթերցողն՝ թէ ասոնց վը-
րայ է մէր ինպիրն և խօսքն, և թէ այս նո-
րագիւտ բաներով՝ մեր նախնեաց հաւատքը
կ'ուզեմք ճանչցընել։ — Ոչ զայդ թողոմք
ժամանակիս հնախոյդ իմաստնոց և իմաստա-
կաց . որք ոչ միայն յայտնեն մերի՝ նոր կրօնց
նոր աստուածք Հայոց, (և մանաւանդ աստու-
ածոց պիտառը խաղուառը խալդ մի), այլ և
նոր կամ հին հայրեր, հին և անձանօթ Հայեր .
մանաւանդ թէ ոչ Հայեր, այլ Հայաստան կո-
չուած երկրի վրայ ճնակող Հայերէն՝ հին ժո-
ղովորդներ և ազգեր. և յետ անոնց՝ եկած
կամ բուսած կ'ըսեն մեր այժմու Հայոց նախ-
նիքը, ոչ շատ գարեր յառաջ քան զթուական
Փրկին։ Աւրեմ թողոլ անոնց աւելի պարզել
և յայտնել այս շատ հետաքննական ազգերն և
իրերը, մենք այլ կերպով մի իրենց և մեր ազ-
գային ասանգութիւնը սիրող կամ քննող բա-
նափրաց՝ կ'ուզեմք կրկնել, և ներկայացընել,
ըստ կարի համառօս, առանց շատ վեր վար
թոշելու և ի խորս մտնելու, որոյ համար ոչ
թեւ ունինք և ոչ բաւական պահ ըստ պահնչից
հմտագունք, այլ պարզ և ուսկաբար նշանա-
կելով՝ ինչ որ մեր նախնիք և օստարազգիք
այլ ի զրուածն, և ինչ որ նիթական յիշատա-
կարանք աւանդեր են Հայոց կրօնից վրայօք, և
ինչ որ նշմարուած է և զեր նշմարուի յազգային
կարծիս, յուղիդ և ի ծուռ հաւատու և առջորու-
թիւն։ Նախ՝ Հայոց ընդհանուր կրօնիք և
Աստուծոյ զաղափարն կամ ըմբռմունքը քննե-
լով, յետոյ պէսէս հաւատքնին կամ պաշտե-
լութինը. Բնութեան կամ Տարերաց, Ախ-
տարաց, կենդանեաց, Հրէշից, Դիւցազանց,
Ուգոց և Դից, նոյնպէս և Մոգութիւնն, Հր-
մայք, Գուշակութիւնք, Հանդերձեալ կենաց
իմաստն, Պաշտօնեալքն և Պաշտօնեալքն :

ԳԼՈՒԽ Ա.

ԿՐԾՎ ՀԱՒԱՏՔ ԵՒ ՊԱՇՏԾՆ

ՍԱՐԴՈՒԽ սրտին կամ հոգույն խորագոյն
իմացմունքն՝ թէ գերազոյն էակ մի կայ, և
ինքն անկէ կախումն ունի, և թէ հանդերձեալ
կեանք մի կայ, զբեթէ ընդհանուր է աւենայն
ազգի և ժողովրդեան, և անհասի այլ. և այն
գերազոյն էակն է իրենց Աստուծնուն. իսկ իմաց-

մտնքն և անկէ հետեւած գործքն՝ առ Աս-
տուծն այն վերաբերեալ, և այն հաղորդու-
թիւնն երկրաորաց բնդ երկնից, կամ ներ-
կայիս ընդ հանգերձելոյն, է կրօնիք, Հաւատքն
և Պաշտօնն : Յետինս՝ արտաքին նշանակ մի է ,
որով իբր նիւթական կերպով և իրօք վկայու-
թիւն կու տայ իր հաւատացած էսակին կամ
էսակաց, ըլլայ Աստուծն զերագիյն ըլլան չո-
տուածք և զիբ, կամ որպիսի և է ոզիք կամ
նիթեք: Ինչպէս Պաշտօնն ծավի ի հաւատոց, —
վասն զի եթէ մէկն հաւատար բանի մի, և ոչ
այ անոր մոտածութիւն կամ նիթական բան մի
նուիթեր. — այսպէս այլ Հաւատար ծավին ի կրօ-
նից: — Ուրշելու են այս երկուքն՝ որ սովո-
րաբար նոյն կարծաւին, և կրրնան կերպով մի
մէկմէկ անրաման ըսուիլ, բայց այնաէս՝ ինչ-
պէս շինուածք մի աեւնսուի՝ հիման վրայ հաս-
ատուածք. կրօնց հիմն է, հաւատար չէնք: Հե-
թանուար (որով կ'իմանամի մեր հին Հայերն այ),
շատ բաներու կամ զից կու հաւատային, ինչպէս
և քրիստոնեայք այլնայլ մասանց (գոր օրինակ
Հաւատամիքի մէջ ըսածներնուն), բայց երկուքն
այլ չէին ընդուներ զանոնք. եթէ ներքին ծա-
խօժութիւն կամ մղում մի չունենային, որով
յանձն առին հաւատալ այն իրաց. և այս էր
կրօնիք զերագիյն և խորագոյն իմաստն տպաւո-
րեալ կամ ազգեալ ի մարզս :

Յայտ է՝ որ թէ և ամեն ազգ և անձն կեր-
պով մի զրեթէ նամանապէս կ'ըսրոնէ զիրօնա
և զԱստուծն, այլ՝ ինչպէս ուրիշ բաներ՝ զայն
ալ տարբեր ձայնով կամ անուամբ բացատրէ .
սակայն այդ անուանց կամ բառը կրրնան ի-
մացողութեան աստիճանն այլ աւելցունել և այ-
լայլի: և ոչ սակաւ հետաքննական երեւած է
բանափրաց՝ այլ բառերուն ծագումը և իմաստը
քննել և թափանցել, ըստ կերպարանչիւր լեզուի :
իրենց թողոլվ բարակ քննաթիւնը, մենք մեր
լեզուի բառից վրայ այս զիսենք կարճօրէն, որ
երկուքն այլ (Հաւատար և կրօնք) յոյնակի են.
թէ և եղակի այլ վարին՝ բայց հետանալով ի-
մասէն: Նշանենք այլ անցողաբար, որ Հա-
ստոց բառն ձայնով և իմաստով նման է կամ
մօտ լատին եղուով և անկէց ծավածներուն,
Fides, Fede, Foi, որոց մէջ եղակի է. թող-
լով ասոնցն ալ իրենց, եթէ ուզէինք մենք մեր
լեզուին բառը ստուգաբանել, արդեօց կըր-

նայի՞նք մօտեցընել կամ հետեւցընել Հայ արմատ բառի, որ սկիզբն, ծայր, և հօր հայր՝ նշանակէ : Բայց այս այլ թողլով բանասիրաց՝ անցնիմք առ կրօնս, յիշելով անցողաբար և զայս, որ ինչպէս ի մեզ հաւատք նշանակէ եւս դաշինք, որիիշ հետ խոստմունք և հաստատութիւն մի, Լատինք այլ ունէին սփափից և զաշանց շաստուած մի հաւատոց անուամբ, Fidius.

ԿՐԾՆՔ. — Այս անուն առ մեզ շատ և սքանչելապէս կ'իմացընէ իր իմաստը, թերեւս լաւազյն քան յայլ լեզու . լատինն (և իր զաւակըն) Religio կ'անտանէ զայս, որ՝ ըստ հասարակ գործածութեան նմանաձայն բային (Religo, կապեմ) ստուգաբաննն կապ, կապել, կապուի, հաջուէ մարդկան ընդ Աստուծոյ կամ երինից, հաջուէ մանաւանդ մարդկան իրարու հետ. վասն զի քան զիրօնս զօրաւոր կապանք չկայ մարդկութեան : — Գեղեցիկ է այս յարմարութիւնս. բայց ոչ է սկզբնական, այլ ծագեալ նախնական իմաստէ մի. այսինքն ենթադրելով որ կայ հաւատայի բան մի՝ հետեւցընէ կապուիլ անոր հետ և անոր հաւատացելոց ։ Խոկ մեր կրօնք անունն՝ չի ցուցըներ հետեւիլ նախապյն իմաստի մի, այլ ինքնութիւն կամ ինքնաբերութիւն մի յայտնէ :

Հին անառուն հեղինակէ հաւատք բառդիրը մ'ունիմք, (որոյ մէջ շատ հին և ընափի բառեր գտուին՝ որը ցես չեն յայտնուած շարազրութեանց մէջ) . սա կրօնք բառը ստուգաբանէ՝ ամենակարճ բայց ամենալի իմաստով. « կրօնք՝ կիր և Հաւանութիւն » : Այսափ է բացասարութիւնն, Ով որ քեզ մի զրոց հայերէնը զիսէ, զիսէ ալ որ կիր՝ կրելու արմատն է, և ինչպէս կրօնք յաճախ յոգնակի վարին՝ այսպէս և սա կիրք գրուի և ըսուի, կ'իմանան ամենքն ի՞նչ դանէ է կիրք, թէ և զանազան կերպով գուցէ իմացած ըլլան՝ ներքին և բաւուն ինքնաբեր զացում մի, և կիրք կոչեն զայն. և զի այս անուամբ այլեւայլ հոգեկան զօրութիւններ կամ զացմունք այլ կ'իմացուին, հաւատոյ զացման սեփականուած է անունն կրօնք . ըսել է որ սա է առաջին և հզօրապյն կիրք բանաւոր մարդու, վերոյիշեալ խորագյն ապաւորութիւնն յինքեան, ճանշանալու իր ծագումն կամ կախումն և պարտաւորութիւնն առ զերագյն էակն : — Վայելչապէս յարէ ստուգաբանն կրից հետ և

Հաւանութիւն . իրեւ անընդէջ կամ անհրաժեշտանք հետեւանք այլպիսի կրից հոգայ՝ զհաւա-նութիւն մատաց, որ է (ինչպէս առաջ ըլինք) Հաւատքն և ըստ այս անունն այլ կըրնայ ի հաւանութենէ ծագուած ըսուիլ քան ի սկզբէ (հաւ), կամ երկուքէն միանգամայն :

Արդարեւ շատ գեղեցիկ, փիլիսոփայական և սրբազն խոկ զիւա և յարմարութիւն է բառս այս՝ իր նշանակութեամբն. և մեծ պարծանք կըրնայ ըսուիլ ազգին կամ լեզովի՝ որ այսպիսի կամ այսոր համազօր նշանակիլ բառ մի ունի կամ յարմարցուցեր է, և իր գերազոյն սկիզբն և վախճանն՝ իր հովթեան խորէն զալով կրօնք ըսեր է, քան զանոնք՝ որ ի կոտեռուէ անծայր ժամանակէ մի համարին զոկիզբն ամենայնի, նա եւ զաստուածոց ։ . . . Բայց այս ըսելով ի միար կու գան Յունաց, այն նրբամիս և զիսնազյն ազգի, և մերձաւոր զիանոց՝ Եգիպտացոց և Հնդկաց յիշասակըն. և կու հարցընեմք մենք մեզի, արդեօք ազգային եռանդ մ'է մեզի այս խոր և քաջիմաստ բանն ընծայել Հայոյ, որ այնափ նուալ էր բան զնոսա՝ յիմաստամիրական, և մի ի թանձր ժողովրդոց Ասիայ, ինչպէս համարուի, չունենալով ոչ հին զարութիւն և ոչ մեհենական մանցուած : — Ըլլայ ինչ որ ըլլայ. բայց օ՞վ կըրնայ համարձակիլ ըսել, թէ այդ յիշեալ և օւրիշ նման հին ազգաց մէջ՝ յստակապյն կամ նահապետական Աստուածպաշտութիւնն՝ կանսած ըլլայ բան թէ ի Հայո : Մեր երկրին դիրքն է ազգային և հին պատմութիւնք, ըստ մեր զասման, վկայենթէ Աստուածպաշտութիւնն եղած ըլլայ հաւատք նախահարց Հայոց, և այսոր հաստատութեան՝ կրօնից անունն և իմաստն : Զայս այլ ըսելով՝ մեծ և նոր բան մի ըսուլ չեմք ըլլար . որովհետեւ ընդունելի է ողջամուաց՝ թէ ճշմարիս Աստուծոյ ծանօթութիւնն ունէին նահապետք կամ հարդ հին ազգերու, որոց մէջ համարիմք զէայն այլ, առանց վիճելու անոր հնութեան չափին վրայ. վասն զի իր հնութեան վրայ չէ հօս մեր ինդիրն, այլ իր աստուածպաշտութեան հնութեանը, և այսա՛ իր առաջին կրօնք ըլլալուն . յորմէ՝ յետոյ ուրիշ ազգաց նման՝ խոտորեցաւ մոլորեցաւ, և նախամիւեալ աղանդոց մէջ ընկաւ, որոց վրայ պիտի զրեմք : Հարկ էր ուրեմն՝ որ նախ յիշեմք աստուածպաշտութիւնը

կամ նահապետակոն կրօնքը, առանց հարկ համարելու բացատրել զայս, որովհեակ ամեն հին ժողովրդոց մէջ այլ նոյն և նման է աստուածպաշտութիւնն, քանի որ թիւրութիւն չէ մնած միջերնին. իսկ երբ խոտորին՝ իրարսէ այլ հեռանան հաւատով և պաշտամամբք. և այն առեն հարկ կ'ըլլայ առանձնակի քննել խօսիլ իրաբանչիւր ազգի վրայ :

Զայս չի սկսած՝ յիշեմք կրօնից և Հաւատոց իմաստի նման կամ մերձաւոր անուն մ'այլ ի լեզուիս, որ է Դաւանանք. այս այլ յոզնակի, թէ և զաւանութիւն այլ կ'ըստոփ. իմաստն յայտնէ աստիճանաբար ծագումն կամ հետեւանք ի Հաւատոց, որպէս նա ի կրօնից. սա առաջին զգացումն՝ կիրքն էր, այնոր մոտաւոր կերպաւորութիւնն և ներկայումն՝ Հաւատոցն, իսկ այսոր բացատրութիւնն բանիւ՝ Դաւանանքն։ Չեմք ուզեր բառիս քերականօրէն այլեւայլ իմաստները քննել, կամ աւելի քրիստոնէական կրօնից մէջ գործածուիլ. ինչպէս այլ ըլլայ՝ մեզի շատ հին կ'երեւի այս բառոս այլ, և վերջի մասը թողլով՝ առաջինն կարծել կու տայ Հընդկաց և Արեաց Տերաս, տերադաս բառից զուգորդութիւնն, ինչպէս գուցէ և դեռ և դից ազգակցութիւնն թողլով և զայս զիտնագունից քննութեան, հարեւանցի յիշեմք և ի Պարսկականէն առ մեզ մոտած դեմ (թ. Տիկն) և Քէշ կամ կեշտ կրօնանիշ բառերն այլ, իրենց թողլով իրենց իմացածը, — Յիշեմք նոյնպէս և զԱ-

դանդ, որ՝ սովորականէ գուրս և մոլար զաւանանց և վարդապետութիւնն նշանակէ, թէ հեթանոսական թէ քրիստոնէական կրօնից մէջ. բայց գուցէ ի սկզբան ուղիղ կամ ընդունուած հաւատքն այլ նշանակիք, եթէ բառին առաջին և զինաւոր մասն՝ Աղ՝ համարիմք նոյնասկզբն Աղօրք, Աղերս, Աղալանք, այլ և Աղու, Աղաւնի, և այլն, բառից, որը ամենն այլ անոյց իմաստ մի ընծայեն։ — Եթէեմք յետ այսոցիկ և Պաշտօն բառը, որ ըստ իմաստին՝ կու զայ յետ Հաւատոց, որոյ մտաւոր արտայայցառութիւնն է Դաւանանքն, զգային և նիւթականն՝ Պաշտօնն. որոյ վրայ հարկ կ'ըլլայ խօսիլ յետ իւրաքանչիւր հաւատոց բացատրութեան. իսկ ծագումն բառին՝ ի բարգորութիւնն մտեալ՝ առանձին Պաշտ չի գտաւիր, թուիր ի Պարսից մտեալ կամ հասարակ Հայոյն և նոցա. գուցէ անոնց Պիհեշտ բառէն՝ որ արբայցութեան պէս բան մի նշանակէ. յորմէ և Արտիպիհէշտ՝ հրեշտակապետի անուն, իրեւու վեհազյն։ Գուցէ նկատելու արժանի համարուի և բասին ի մեր լեզու վահ վանկով՝ յարկելի իմաստ տուող բառից կազմնաթիւնն. ինչպէս Պատարագ, Պատրուժակ Պատիւ, Պաղատանք, Պագանել, Պատշաճ, և այլն։ Այս երկրայական և ոչ շատ կարեւոր բառից քննութիւնները յանձնելով երկայնամուց՝ անցնինք առ ամենէն կարեւորն որ է Աստուած։

Շարայարելի

ԱՍՏԻՇՆ ՄԵ ԾԵՐՑՎ

————— 332 —————

Ղաւա շիրիմը վարդիմ.

- Այս արտասուր՝ զորս առաւոտ կաթէ քեզ, ծաղիկ սիրոյ, ինչ կ'ըմես։
- Եւ վարդն ըստ առ շիրիմ։
- Դու ինչ կ'ըմես՝ որ ինչ զորի սըլըլթաց Ամոքմիդ մէջ մշշտարաց։

Պատասխանեց վարդօ. — Ով մըթիմ զամբարամ, Զայմ արտասուր կ'ըմեմ ի ստուեր մևաթյոր թամբար ծաղկամ և հուտ մեղրի քաղցրաբոյր։ Կըրկնեց շիրիմ ամոքէ. — Ծաղիկդ ողբակամ, Այս ամենայտ նոգի՝ առ իս որ հասմի՛ Զըւարթագեղ կ'ըմեմ հրեշտակ մի երկիր։

Վիկտոր Հոնդով

Ներքին ձայնեք, — Տաղ Ալ,